https://doi.org/10.46991/hc.2022.17.1.194

Էդուարդ Զոհրաբյան
պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ

Քրիստինե Մելքոնյան
պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ, ՄԻՏՈՒՄՆԵՐ[1]

Հիմնաբառեր. Հյուսիսարևմտյան Կովկաս, Հարավային Կովկա, Կրասնոդարի երկրամաս, հայկական համայնք, Ռուսաստանի հայ գաղթօջախ, Արմավիր, Ռուսաստանի Դաշնություն, գաղթ, վերաբնակեցում:

Կրասնոդարի երկրամասի հայերը ներկայացնում են XX դարի ամենամեծ հայկական համայնքներից մեկը: Ողջ XX դարի ընթացքում հայերը բավական արդյունավետ գործունեությամբ են զբաղվել այս տարածաշրջանում՝ մասնակցելով տեղական քաղաքական, մշակութային ու տնտեսական գործընթացներին: Այստեղի համայնքներն ունեն կազմակերպված և գործող կառույցներ, որոնք փորձում են պահպանել հայկական ինքնությունն ու ազգային արժեքների համակարգը աշխարհի այս անկյունում:

Հոդվածում քննարկվում են Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների զարգացումն ու միտումները հետխորհրդային շրջանում: Բացի մեթոդաբանական խնդիրներից՝ այստեղ դիտարկվում են երեք հիմնական պատմական փուլեր, որոնց ընթացքում Կրասնոդարի երկրամասում ձևավորվել է հայկական սփյուռքը: Հատկապես մանրամասն ներկայացված է անցյալ դարի 80-ականների վերջին ընդգրկող երրորդ փուլը: Հոդվածում հատկապես մանրամասնորեն ներկայացվում են այն գործընթացները, որոնք նպաստել են Ռուսաստանի Դաշնության հայերի վերջին ժամանակներում շոշափելիորեն նկատվող ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Այս առումով դիտարկվում է հայի ինքնագնահատականի և ազգային ինքնագիտակցության բարձրացման բացառիկ կարևորությունը՝ որպես հայի կերպարի բաղադրամասեր Սփյուռքում ապրելու պայմաններում: Ռուսաստանի Դաշնության նորացվող ազգային քաղաքականության համապատկերում դիտարկվում են հայերի

[1]Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿ և ՀՀՌՀ (ՌԴ) «20RF143» գիտական համատեղ ծրագրի շրջանակում:

հարաբերությունները ռուսների և այլ էթնիկ խմբերի հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններն ու հայրենադարձության խնդիրները:

Eduard Zohrabyan
PhD, Associate Professor, YSU, Head of Chair at the History of Armenia's Neighboring Countries

Kristine Melkonyan
PhD, Associate Professor, YSU, Chair of the History of Armenia's Neighboring Countries

ARMENIAN COMMUNITIES OF THE KRASNODAR KRAI OF THE RUSSIAN FEDERATION: DEVELOPMENTS AND TRENDS

Keywords: North-West Caucasus, South Caucasus, Krasnodar Krai, Armenian community, Armenian community Russia, Armavir, Russian Federation, migration, settlement .

The Armenians of the Krasnodar Krai represent one of the largest Armenian communities in the 20th century. Throughout the whole 20th century Armenians were engaged in quite productive activities in the Krasnodar Krai, being part of local political, cultural and economic procedures. They have well organized and operating structures trying to preserve the Armenian identity and system of national values in this corner of the world.

The article discusses the development and trends of the Armenian communities of the Krasnodar Krai of the Russian Federation in the post-Soviet period.

In addition to methodological problems, it examines three major historical stages, during which Diaspora was formed in Krasnodar Krai. Particularly details of the third period, including the end of the 80th of the last century are described. It shows how modern technological resources contribute to the preservation of national identity of Armenians and also support the process of the integration of Armenians in Russia.

In this regard, underlines the critical importance of self-evolution of the Armenians and the enhancement of national identity as components of the image of the living conditions of Armenians in the Diaspora. Against the backdrop of renewed Russian bational policy addresses the relationship if the Armenians with Russian and other ethnic groups as weil as the relationship with Armenia and the problem of repatriation.

Эдуард Зограбян
кандидат исторических наук, доцент, заведующий кафедрой истории сопредельных стран Армении ЕГУ

Кристине Мелконян
кандидат исторических наук, доцент кафедры истории сопредельных стран Армении ЕГУ

АРМЯНСКИЕ ОБЩИНЫ КРАСНОДАРСКОГО КРАЯ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ: РАЗВИТИЯ И ТЕНДЕНЦИИ

Ключевые слова: Северо-Западный Кавказ, Южный Кавказ, Краснодарский край, армянская община, армянская община России, Армавир, Российская Федерация, миграция, расселение.

В 20-м веке в Краснодарском крае была сформирована одна из крупнейших армянских диаспор. В течение всего 20-го века они развивали довольно активную деятельность в Краснодарском крае, участвуя в местных политических, культурных и экономических делах. Армянская диаспора в Краснодарском крае имеет организованные и деятельные структуры, которые всячески стремятся сохранить армянскую этническую идентичность и свою систему культурных ценностей в этой части большого мира.

В статье рассматриваются развитие и тенденции армянских общин Краснодарского края РФ в постсоветское время.

Помимо методологических проблем здесь рассматриваются три основных исторических этапа, в течение которых сформировалась диаспора в Краснодарском крае. Особенно подробно освещается третий этап, охватывающий конец 80-ых годов прошлого века. Подчеркивается ошутимый за последнее время подьем национального самосознания армян России.

В связи с этим подчеркивается исключительная важность самооценки армян и повышения национального самосознания как составляющих имиджа армян в условиях проживания в диаспоре. На фоне обновляющейся национальной политики России рассматриваются взаимоотношения армян с русскими и другими этническими группами, а также взаимосвязи с Арменией и проблемы репатриации.

* * *

Ներածություն: Հյուսիսարևմտյան Կովկասը էթնիկական պատկերով շատ բարդ տարածաշրջան է: Ներկայումս այստեղ ապրում է ավելի քան 80 ժողովուրդ ու ազգություն: Սակայն ոչ բոլորն են իրենց փոքրաքանակության ու բնակեցվածության խտության պատճառով ազդեցություն ունենում էթնոժողովրդագրական իրավիճակի վրա, քանի որ Հյուսիսարևմտյան Կովկասի էթնիկ խճանկարը ձևավորվում է առաջին հերթին մի քանի էթնիկ խմբերի կողմից: Դրանց թվում են հայերը, որոնք շուրջ 300 տարի նկատելի ազդեցություն են ունեցել այս տարածաշրջանում, հատկապես Կրասնոդարի երկրամասում:

Կրասնոդարի երկրամասի հայության հիմնախնդիրների, առանձնահատկությունների և համայնքում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությունն ու վերլուծությունն արդիական են, քանի որ տեղի հայությունը, իր երկարատև կեցությամբ և խիստ բազմազանությամբ հանդերձ, կարողացել է պահպանել հայկական դիմագիծը: Ներկա հոդվածի նպատակն է, անկախ ՌԴ Կրասնոդարի երկրամասում հայկական համայնքների աշխարհագրական տեղադրությունից ու միջավայրից, առաջնային տեղ հատկացնելով հայ ինքնության պահպանմանը, ներկա-յացնել այլէթնիկ միջավայրում հայկական համայնքների կացությունը, նրանց ինստիտուցիոնալ կայացման, տնտեսական, սոցիալական, էթնոմշակութային, քաղաքական համարկման իրողությունները:

Գիտական նորույթն է ամփոփ ներկայացնել Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների կենսագործունեությունը, զարգացման հեռանկարներն ու միտումներըՌԴ հայկական համայնքների գործունեության համատեքստում:

ՌԴ հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը գիտական հետազոտության կայուն հիմքերի վրա է դրվել դեռևս XX դարի երկրորդ կեսին: Մասնակիորեն ուսումնասիրված են Կրասնոդարի երկրամասի հայ համայնքի պատմության, սոցիալական շերտավորման առանձին հարցեր, մինչդեռ մեր նպատակն էր ներկայացնել Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքներում առկա խնդիրներն ու ընթացող գործընթացները:

Հետազոտությունը իրականացվել է խնդրո թեմայի վերաբերյալ առկա արխիվային նյութերի, հայերեն ու ռուսերեն գիտական տարաբնույթ ուսումնասիրությունների և պարբերական մամուլից քաղած նյութերի հիման վրա վերլուծական, համադրական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Կրասնոդարի երկրամասում հայկական համայնքների ձևավորման գործընթացն ըստ փուլերի: Հայերը Ռուսաստանում հաստատվել են տակավին Կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանում, հատկապես հոսքը ուժեղացել է XII-XIV դարերում: Հայկական գաղթօջախներ են հիմնադրվել Մոսկվայում, Նովգորոդում, Կազանում, Աստրախանում, Հյուսիսային Կովկասում և այլ վայրերում: XVII դարում Ռուսաստանի դերի աճն ու հայ առևտրական բուրժուազիայի ծնունդն էլ ավելի խթանեցին հայերի գաղթը դեպի Ռուսաստան: Հայ վաճառականներն առաջին օտարերկրացիներն էին, որոնք ստացել էին Ռուսաստանի տարածքով տարանցիկ առևտուր անելու իրավունք («Հայ Սփյուռք» հանրագիտարան, 2003, 453):

Ռուսատանի հարավում հայերի վերաբնակեցման ու հաստատման գործընթացն ընթացել է մի քանի փուլով: Այստեղ տարբեր ժամանակներում հայեր են վերաբնակվել ինչպես օսմանյան և պարսկական հալածանքներից, այնպես էլ սոցիալ-տնտեսական խնդիրներից դրդված: Մինչդեռ Հյուսիսային Կովկասում հայկական համայնքը ձևավորվել է XVIII-XX դարերում: Սկզբնական շրջանում՝ XVIII դարում, վերաբնակեցման հիմնական կենտրոններն էին Ղզլար ու Մոզդոկ քաղաքները (Բարխուդարյան, Ալեքսանյան, 2015, 68-

70; Մինասյան, Մայիլյան, Մխոյան, 2018, 11-12)։ Հայկական գաղթօջախների կազմավորման գործընթացը շարունակվել է նաև XIX դարի 1-ին կեսին։

XIX դարի 30-ական թթ. չերքեզահայերը Հյուսիսային Կովկասում հիմնադրեցին Արմավիրի հայկական գաղթօջախը։ XIX դարավերջին Արմավիրը դարձավ Հյուսիսային Կովկասի գլխավոր արդյունաբերական ու առևտրային կենտրոններից մեկը (Ктиторов, 2019, 45)։ XIX դարի 90-ական թթ. Թուրքիայում աբդուլհամիդյան կոտորածների հետևանքով արևմտահայության զգալի հատվածը գաղթեց Հյուսիսարևմտյան Կովկաս՝ համալրելով տեղի հայ գաղթօջախներն ու հիմնելով նորերը։ 1894-1895 թթ. Թուրքիայից արտագաղթողների թիվն ավելացավ՝ հիմնականում Տուապսեի, Սոչիի, Ադլերի, Անապայի, Նովոռոսիյսկի, Մայկոպի ուղղությամբ (Вартумян, 2012, 147)։ 1894 թ. ձևավորվեց Եկատերինոդարի հայկական գաղութը։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերի մի մասն էլ հանգրվանեց Ռուսաստանի տարբեր շրջաններում։ Փախստականները վերաբնակվում էին Սև ծովի ափով մեկ և Հյուսիսային Կովկասի շրջաններում։ 1920 թ. հայ բնակչության թիվը կազմում էր համապատասխանաբար 45,3 և 13 հազար մարդ, որոնցից 65,1 և 41,8 %-ը քաղաքաբնակներ էին և զբաղվում էին առևտրով ու արհեստներով (Вартумян, 2012, 147)։ Հայերը հիմնականում բնակվում էին Մայկոպում, Եկատերինոդարում, Տուապսեում ու Սոչիում (Вартумян, 2012, 148)։

Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1920-ական թթ. երկրորդ կեսից, ամբողջատիրական համակարգի պայմաններում Ռուսաստանի հայ գաղթօջախների մշակութային կյանքն աստիճանաբար անկում ապրեց. փակվեցին հայկական դպրոցների զգալի մասը, մշակութային օջախները մարեցին, պարբերականները դադարեցին լույս տեսնել, արգելվեց հայ եկեղեցու գործունեությունը։ Դեպի Ռուսաստան հայերի զանգվածային հոսքը սկսվեց 1988 թ., երբ Ղարաբաղյան ազատագրական պայքարի ընթացքում ադրբեջանական իշխանությունների կողմից հայերի կոտորածների, բռնի տեղահանության, վրաց-աբխազական պատերազմի հետևանքով հայ փախստականների հոծ զանգվածներ հաստատվեցին Ռուսաստանում։ Նրանց գումարվեցին նաև 1988 թ. ավերիչ երկրաշարժի և Հայաստանի շրջափակման հետևանքով արտագաղթած հայերը։ Վերջիններս հաստատվեցին Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, Մոսկվայում և այլուր։ Եթե 1989 թ. մարդահամարի տվյալներով հայերի ընդհանուր թիվը Ռուսաստանում 532,4 հազար էր, ապա 1994 թ. հասավ 1,8 մլն (որոշ տվյալներով՝ 2 մլն) («Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, 1995, 86; «Հայ Սփյուռք» հանրագիտարան, 2003, 460), ներկայումս ՌԴ բարձր ղեկավարների, պաշտոնյաների կողմից նշվում է ավելի քան 2,5 մլն։ Ռուսաստանի հայերի հիմնական մասը բնակվում է երկրի հարավային շրջաններում։ 1989 թ. տվյալներով Ռուսաստանի 532,4 հազար հայերից 317,3 հազարը տեղաբաշխված էին նշված տարածաշրջանում՝ Կրասնոդարի երկրամասում՝ 182,2 հազար, Ստավրոպոլի երկրամասում՝ 72,5 հազար, Ռոստովի մարզում՝ 62,6 հազար (ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 217, թ. 3)։ Այս ցուցանիշներն ավելի զգայուն են դարձնում ՌԴ և ՀՀ ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային փոխհարաբերությունների բնույթը, որոնց պետք է վերաբերվել առավել լրջությամբ՝ չվնասելով այդ հարաբերությունները։

Այսպիսով՝ Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում հայության վերաբնակեցման ու հաստատման ողջ ընթացքը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի. առաջին փուլն ընդգրկում է պատմական տևական ժամանակաշրջան՝ ընդհուպ մինչև 1915 թվականը: Երկրորդ փուլը 1915 թ. հետո ընկած ժամանակաշրջանն է, երբ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հետևանքով հայրենազրկված հայության նոր զանգվածներ հանգրվանեցին Ռուսաստանում: Հայերի հոսքի վերջին՝ երրորդ փուլը սկսվում է ԽՍՀՄ փլուզմամբ. մի կողմից՝ Ադրբեջանում Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Խանլարի հայ բնակչության ջարդերը, մյուս կողմից՝ Հարավային Կովկասում ծագած հակամարտությունները, 1988 թ. Սպիտակի երկրաշարժը և արտադրականտնտեսական կապերի վերացումը հանգեցրին աշխատանքային միգրացիայի: Սփյուռքայնացման նոր փուլը թևակոխեց որակապես նոր աստիճան: Ավելորդ չէ նկատել, որ վերջին՝ 3-րդ փուլի, մասնավորապես հետխորհրդային շրջանի առանձնահատկությունն այն էր, որ այն տեղի է ունենում հայոց *անկախ պետականության գոյության պայմաններում, որը պարադոքսալ երևույթ է:*

Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների կենսագործունեությունը XX դարի 90-ական թվականներից մինչև XXI դարի սկիզբը: Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները տարածաշրջանում սկսեցին իրավաբանորեն ձևակերպվել XX դարի 90-ական թթ. սկզբներից: Ընդհանուր առմամբ Ռուսաստանի հայ համայնքներում հասարակական-քաղաքական և ազգային-մշակութային կյանքի զարթոնքն սկսվել է 1980-ական թթ. երկրորդ կեսից վերակառուցման քաղաքականության շնորհիվ: Արդեն խորհրդային վերջին տարիներին վերակառուցման քաղաքականության և Ղարաբաղյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ նկատելի էին Ռուսաստանի հայկական գաղթօջախներում ազգային զարթոնքի ու ինքնագիտակցության վերելքի դրսևորումներ: Հայապահպանության, ազգային ինքնության հաստատման և հայրենիքի հետ փոխհարաբերությունների խնդիրները դառնում էին առաջնահերթ:

Այսպիսով՝ հայկական գաղթօջախների, տարաբնույթ ազգային կազմակերպությունների ձևավորման ու դրանց համախմբման ոչ դյուրին գործընթացը տեղի ունեցավ միայն ԽՍՀՄ փլուզումից հետո: *Ռուսաստանի հայությունը հայտնվեց բոլորովին նոր իրավիճակում, հասարակական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, էթնոմշակութային, բարոյահոգեբանական արմատապես փոփոխված միջավայրում:*

Այսպես կոչված՝ «ներքին սփյուռքը»՝ որպես իրողություն ու եզրույթ, վերացավ: Ռուսաստանի հայկական համայնքները դարձան Հայաստանում սոցիալական բարձր լարվածության և աշխատանքային շուկայում չզբաղված, գործազուրկ աշխատուժի կլանման միջավայր: Հետխորհրդային տարիներին ներգաղթածների ընդգրկման աշխարհագրությունն ավելի լայն է (Վրաստանի, Գյումրիի, Վանաձորի, Հայաստանի այլ վայրերի), Ղարաբաղի հայեր, գետաշենցիներ, Բաքվի, Գանձակի հայեր և այլն: Սոցիալական պատկանելությամբ ավելի քան հնաբնակները ծառայողներ էին, գործարարներ, քանի որ հայության այդ մասի ներկայացուցիչներն ունեին կրթական բարձր մակարդակ ու արտադրական հմտություններ: Խորհրդային շրջանի այդպիսի տարագիրների թիվը միայն

Կրասնոդարի երկրամասում հաշվվում էր մինչև 50 հազար մարդ (Корякин, 2007, 47): Ավելին՝ XX դարի 90-ական թթ. Կրասնոդարի երկրամասի առաջին ղեկավարները եղել են հայապահպան՝ ձուլումից փրկելու ջատագով մտավորականության ներկայացուցիչները, որոնք, սակայն, ֆինանսական հնարավորություններ չեն ունեցել այդ նպատակներն իրագործելու համար: Հետագայում համայնքի ղեկավար մտավորականներն աստիճանաբար փոխարինվում են գործարար ներկայացուցիչներով, որոնք ունեին ֆինանսական հնարավորություններ, բայց հստակ չէին պատկերացնում այդ հնարավորությունների կիրառման ոլորտները: Բացի դրանից՝ Կրասնոդարի հայկական համայնքների համալրումը նոր ներգաղթյալներով կամ նոր սփյուռքայնացումը նպաստեց ազգային մշակույթի ու ինքնագիտակցության խթանմանը: Այդ նպատակին էին ուղղված Ռուսաստանի այդ տարածաշրջանում բնակվող հայերի կողմից ստեղծված մշակութային, լուսավորական «Հայկական մշակույթի և գթության» (ք. Կրասնոդար), «Նոր Նախիջևան» (ք. Ռոստով) «Էրեբունի» (ք. Ստավրապոլ), «Արմավիր» (ք. Արմավիր), «Ցանք» (ք. Անապա), «Արարատ» (ք. Աբինսկ), «Վերածնունդ» (ք. Աբշերոնսկ), «Համշեն» (ք. Տուապսե), «Սևան» (ք. Սոչի) և այլ ընկերությունների ու կազմակերպությունների գործունեությունը:

Հայկական Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքի օրինակը ցույց է տալիս, որ 1980-1990-ական թթ. Ռուսաստանում հայերի ազգային-մշակութային վերածնունդը նոր վերելք ապրեց, որն ուղեկցվեց հայերի ՌԴ սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքում արագ ներգրավմամբ: Հայերն ընդգրկվեցին զբաղմունքների ամենատարատեսակ ոլորտներում: Ռուսաստանում հաստատված հայերը ակտիվորեն մասնակցում էին նաև տվյալ քաղաքի, մարզի, երկրամասի հասարակական-քաղաքական կյանքին: Կուբանի հայերը 2011 թ. ունեին իրենց 42 ներկայացուցիչները շրջանային խորհուրդներում (Гомцян, 2012, 10):

Կյանքի բոլոր ոլորտներին համարկմամբ ընթանում է նաև միջմշակութային սահմանների համահարթեցման գործընթաց, աստիճանաբար անհետանում են խոսակցական ու լեզվական, ինչպես նաև ծիսական-կենցաղային տարբերությունները: Միաժամանակ զգալի է դառնում նաև ռուսական ու տեղական մյուս մշակույթների փոխազդեցությունը: Ռուսական իրականությանը հայերի համարկման ճանապարհին կարևոր քայլ է Ռուսաստանի հռչակած նոր ժողովրդագրական քաղաքականությունը, որի բուն նպատակը ԱՊՀ աշխատանքային ռեսուրսների ներգրավումն է սեփական երկրի ժողովրդագրական խնդիրները հոգալու, նվազող մարդկային կապիտալը համալրելու համար: Դրա իրականացման ուղիներն են հայրենադարձությունը, աշխատանքային միգրացիան և այլն: Այդ նպատակին է ուղղված ՌԴ կառավարության կողմից իրականացվող կամավոր վերաբնակեցման «Հայրենակիցներ» ծրագրի կենսակոչումը: Անօրինական աշխատանքի մեկնած ներգաղթյալների օրինականացման պարզեցված կարգը ևս նպաստավոր է Ռուսաստանի տարածքում սեզոնային կամ մշտական բնակվող հայ ներգաղթյալների նոր վայրում հաստատվելու, միջավայրին լիովին հարմարվելու առումով (Թաթոյան, 2007, 129):

ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների կյանքում որակապես նոր իրողություն էր միջհամայնքային կապերի արմատավորման ու ամրապնդման գործընթացը: Ժամանակակից տեխնոլոգիական նորամուծությունները տեղեկատվության ոլորտում լայն հնարավորություններ են ընձեռում ինչպես Ռուսաստանում հայկական

համայնքների միջև սերտ շփումների ապահովման, այնպես էլ հայրենիքի հետ կապերի պահպանման ու համագործակցության համար: Ինքնակազմակերպման, ազգային ինքնության պահպանման և միավորման գիտակցությունը դարձավ կարևոր խթանիչ՝ հայկական համայնքների համագործակցությանը կազմակերպված բնույթ հաղորդելու համար:

Հիշատակված գործոնների շնորհիվ տեղի է ունենում Ռուսաստանի հայության որակապես նոր հանրույթի ձևավորման մի գործընթաց միասնական ազգային ինքնագիտակցության ամրապնդմամբ և ռեգիոնալ սոցիալական տարածության ընգրկմամբ: Սակայն միջհամայնքային հարաբերություններում առկա են բազմաթիվ խոչ-ընդոտներ, տարաբնույթ իրարամերժ դիրքորոշումներ, անգամ հակասություններ՝ պայմանավորված մրցակցությամբ, առաջնության դափնիները կրելու ձգտումներով:

Հայկական համայնքների կյանքում վճռորոշ դերակատարություն ունեն Հայոց առաքելական եկեղեցու ՌԴ թեմերը՝ իբրև ազգային ինքնության հաստատման առանցքային օղակներ: 1991 թ. հիմնադրվեց Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդությունը (Բարխուդարյան, Ալեքսանյան, 2015, 347): Այս գործի կազմակերպմանը մեծ աջակցություն, ազգային խնդիրներին սատարելու անմնացորդ ջանքեր գործադրեց Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը:

1997 թ. Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվեց երեք թեմերի: 1990-ական թվականներից մինչև 2013 թվականը տասնյակ նորակառույց հայկական եկեղեցիներ իրենց հոգևոր լուսավորչական գործունեությունն են ծավալել Մոսկվայում, Նովոռոսիյսկում, Կրասնոդարում, Ադլերում, Տեգինկայում, Պյատիգորսկում, Սոչիում, Ստավրոպոլում, Կուրգանինսկում, Ապշերոնսկում, Կալինինգրադում, Նիժնի Նովգորոդում, Վսեվոլժսկում, Կիրովում, Վոլգոգրադում, Կրասնոյարսկում, Բառնաուլում, Վլադիվոստոկում և այլուր (Բարխուդարյան, Ալեքսանյան, 2015, 347): Հայկական համայնք-ների հոգևոր կյանքի աշխուժացումն ու վերելքը ուղեկցվում էին ոչ միայն գոյություն ունեցող եկեղեցիների վերաբացմամբ, այլ նաև եկեղեցաշինությամբ, նոր եկեղեցիների ու հոգևոր կոթողների կառուցմամբ: 2009 թ. սեպտեմբերին մեծ հանդիսություններով բացվեց Հայ առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդարանը: Բացի դրանից՝ 2003 թ. ԱՊՀ երկրներում մեր հայրենակիցների նոր արտագաղթի հետևանքով արդեն ապրում էր մոտ 2 միլիոն 800 հազար հայ, որից 2 միլիոն 200 հազարը՝ Ռուսաստանում («Հայ Սփյուռք» հանրագիտարան, 2003, 460): Միգրացիոն այս գործընթացները տեղի էին ունենում տարերայնորեն, առանց լուրջ վերահսկողության և անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացման, միգրացիոն գործընթացների ուղղորդման պետական քաղաքականության բացակայության պայմաններում: Ներկայումս ոչ միայն աճել է ներգաղթողների քանակը, այլև փոխվել է միգրանտների տիպը, մոտիվացիայի համակարգը, կյանքի կերպը և ոճը, ադապտացվելու հնարավորություններն ու ռեսուրս-ները: Եթե համեմատաբար դյուրին էին լեզվական, մշակութային, տնտեսական ինտեգրման դժվարությունների հաղթահարումը, ապա նույնը չի կարելի ասել միջէթնիկ հարաբերությունների կարգավորման մասին:

Հետխորհրդային շրջանում հայկական գաղթօջախների վերածննդի վերը բերված *գործընթացների տարերային զարգացումների* որոշակի փուլում ծագեց միջէթնիկ բախումների վտանգ, որի սպառնալիքն այսօր էլ առկա է: ՌԴ-ում ապրող հայության ճնշող մեծամասնությունը գտնվում է հակամարտության, ազգամիջյան առավել սուր լարվածության գոտիներում: Դա բացատրվում է նրանով, որ Ռուսաստանի հարավային, հատկապես Կրասնոդարի երկրամասում 1980-ական թթ. վերջերից սկսած հայկական համայնքների նոր՝ Հայաստանից ու Ադրբեջանից ներգաղթյալներով համալրումն ուղեկցվում էր ինչպես տարածաշրջանում Ուզբեկստանից թուրք-մեսխեթցիների հաստատմամբ, այնպես էլ Թուրքիայի կողմից տարածաշրջանում ազդեցության ընդլայնման հավակնոտ ձգտումներով: Ստեղծված պայմաններում միջէթնիկ հակասությունները վերածվում էին բախումների: ՌԴ հայկական համայնքների արդի զարգացման, առկա հիմնախնդիրները հաղթահարելու, նոր մարտահրավերներին դիմակայելու անխուսափելի պայմաններից է նաև այդ համայնքների ու նրանց միացյալ կառույցների ինստիտուցիոնալ կայացման գործընթացի խելամիտ կազմակերպումը:

1990-ական թթ. առաջին կեսին ՌԴ-ում և ԱՊՀ երկրներում ձևավորվեցին հայ համայնքների խորհուրդներ, մշակութալուսավորչական մարզական կազմավորումներ: Մոսկվայում այդպիսի կազմակերպությունների թիվը հասավ 35-ի, Կրասնոդարում՝ 22-ի, Ստավրոպոլում՝ 10-ի, Սանկտ Պետերբուրգում՝ 4-ի և այլն («Լրագիր», 27.07.1995): Առաջնային դարձավ այդ կազմավորումների համախմբման և միասնական մարտավարության ապահովումը: 1999 թ. սեպտեմբերին՝ Հայաստան-Սփյուռք համահայկական համաժողովից հետո, Մոսկվայում արագացվեց հայկական կազմակերպությունների միավորման գործընթացը, որը դյուրին գործընթաց չէր: Մոսկվայում գործում էին հայկական չորս տասնյակ կազմակերպություններ, Կրասնոդարում դրանց թիվն անցնում էր երեք տասնյակից, Ստավրոպոլում գործում էին 28 համայնքներ: Հայերն ապրում էին նաև Ռուսաստանի 37 մարզկենտրոններում ու 52 քաղաքներում և գյուղերում, որոնց մեծ մասում կային ձևավորված համայնքային մարմիններ («Հայաստան», 16.05.2005): Ինչ վերաբերում է Կրասնոդարի նոր կազմակերպություններին, ապա վերջիններիս մեջ կային այնպիսիները, որոնք կարող էին վստահաբար ոտքի կանգնել և իրենց տեղն ունենալ Կուբանի հայկական հասարակական շարժման մեջ: Այդպիսի կազմակերպություններից են Հայկական գիտական տեղեկատվական-մշակութային «Համշեն» կենտրոնը, որը ստեղծվել է 2000 թ., 2005 թ. ստեղծված «Նարեկ» մշակութային ու կրթական կենտրոնը, «Երկրամաս» թերթի հասարակական կառույցները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունեն երկրամասի շատ շրջաններում (Симонян, 2011, 26): Հայկական կազմակերպությունների գործունեությունը պարբերաբար ակտիվանում էր, ինչը պայմանավորված էր Ռուսաստանի հայկական սփյուռքում, այսինքն՝ Մոսկվայում տեղի ունեցող գործընթացներով:

Կրասնոդարի հայկական կազմակերպությունների գործունեությունը պարբերաբար ակտիվանում էր, ինչը կապված էր Ռուսաստանի հայկական սփյուռքում, այսինքն՝ Մոսկվայում տեղի ունեցող գործընթացներով: Այսպես, համայնքների զարգացման հերթական փուլը սկսվեց Մոսկվայում Համառուսական հասարակական «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) կազմակերպության հիմնմամբ, ինչը Կուբանում մեծ խանդավառությամբ ընդունեցին: Հիշեցնենք, որ 2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայում բացվեց

ՌՀՄ համառուսաստանյան հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը՝ ՌԴ-ի 44 սուբյեկտների հայ համայնքները ներկայացնող 172 պատվիրակներով («Ազգ», 17.06.2000):

Ընդհանուր առմամբ նկատենք, որ Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքի ներհամայնքային կապերն ընդհանուր առմամբ թույլ են: Բացառություն կարող են կազմել ոչ մեծ բնակավայրերի համայնքները, որոնք ընդհանուր արմատներ ունեն, օրինակ՝ Կրասնոդարի երկրամասի Մեծ Սոչիի կամ Տուապսեի շրջանի մեծ գյուղերում, Ռոստովի մարզի Մյասնիկյան շրջանում և Ռուսաստանի հարավի մի շարք այլ բնակավայրերում:

Այսինքն՝ այն շրջաններում, որտեղ հայ բնակչությունն ավելի միատարր է ընդհանուր արմատների առումով, ինչպես նաև ամուր են գործարար ներկայացուցիչների ներհամայնքային կապերը, ինքնակազմակերպման մակարդակը բարձր է: Բացի դրանից՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում տարեցտարի ավելի մեծ թվով հայեր են ընտրվում, ընդ որում՝ նրանցից շատերն անմիջական կապ ունեն հայկական համայնքների հետ: Նրանցից ոմանք նույնիսկ Կրասնոդարի երկրամասի ինքնակառավարման մարմինների ղեկավարներ են ընտրվում: Հայեր կան նաև ՌԴ Կրասնոդարի երկրամասի օրենսդիր մարմիններում: Սակայն նրանց գործունեությունն իշխանության ընտրովի մարմիններում գործնականում ոչ մի կերպ կապված չէ հայ բնակչության շահերի լոբբինգի հետ: Հայկական հարցերով նրանք ստիպված են հիմնականում զբաղվել այն ժամանակ, երբ ինչ-որ հակամարտություն է ծագում հայերի հետ, որն ազգամիջյան դիմակայության բնույթ է ստանում: Օրինակ՝ հայկական կազմակերպությունների առավել մեծ ակտիվության շրջանը համընկել է ինչպես Արցախյան առաջին, այնպես էլ վերջին պատերազմի ժամանակահատվածի հետ, երբ համայնքների մեծամասնությունն աշխատում էր «ամեն ինչ՝ ճակատի, ամեն ինչ՝ հաղթանակի համար» սկզբունքով՝ կազմակերպելով հումանիտար և այլ օգնության առաքումը ՀՀ: Բայց երբ նման աշխատանքի անհրաժեշտությունը վերանում է, հայկական շատ կազմակերպություններ իրենց գործունեությունը հասցնում են նվազագույնի կամ ընդհանրապես դադարեցնում են այն:

Եզրակացություններ: Այսպիսով՝ XIX դարի սկզբից Կրասնոդարի երկրամասում ձևավորվեցին հայերով խիտ բնակեցված բնակավայրեր, որոնք նպաստեցին մշակույթի պահպանմանն ու զարգացմանը և զգալիորեն նվազեցրին ուծացման մեխանիզմների ազդեցությունը՝ հատկապես հաշվի առնելով, որ Կրասնոդարի երկրամասի հայերին հաջողվել է վերաբնակիչներից դառնալ որոշ բնակավայրերի հիմնադիրներ, ինչպես նաև այդ երկրամասում հանդիսանալ տնտեսական շարժիչ ուժ՝ այդ կերպ ստեղծելով մշակութային փոխներթափանցման պարարտ հող:

Այսպիսով՝ ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

- հետխորհրդային շրջանում ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայությունը ստվա-րացավ, աշխուժացան հին գաղթօջախները, առաջացան նորերը, դրանցից շատերը ձեռք բերեցին համայնքային բնույթ:

- Բուռն վերելք ապրեց ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայերի ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպվեցին բազմաթիվ ազգային, լուսավորական, մշակութային, կրթական օջախներ, ընկերություններ, հասարակական կազմակերպություններ, լույս ընծայվեցին բազմաթիվ թերթեր, պարբերականներ և այլն:
- Մի շարք համայնքներ հասան կազմակերպվածության բարձր աստիճանի: Ներհամայնքային ու միջհամայնքային առարկայական ու ենթակայական մի շարք, երբեմն անհամադրելի գործոնների առկայության պայմաններում առարկայնացավ հայ համայնքների ինստիտուտուցիոնալ կազմավորման բազմանիստ գործընթացը: Սակայն ասել, թե հայերը բոլոր գաղթօջախներում լիարժեքորեն համախմբված են, և օգտագործվում են միջհամայնքային բոլոր ռեսուրսները, հեռու կլինի իրականությունից:
- Հայրենիքի հետ կապերի, միջհամայնքային համագործակցության առումով կարևոր նշանակություն են ձեռք բերել նաև տեղեկատվական նոր միջոցների կիրառումը, զանգվածային լրատվության տարատեսակ միջոցները, նախկինում գոյություն ունեցող և նոր ստեղծված թերթերն ու հանդեսները:
- Հետխորհրդային տարիներին ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները դարձան Հայաստանում սոցիալական բարձր լարվածության, աշխատանքային ռեսուրսներում գերհագեցած աշխատաշուկայի պարպման, աշխատուժի ավելցուկի կլանման միջավայր՝ միաժամանակ ֆինանսական փոխանցումներով ապահովելով Հայաստանի բնակչության զգալի զանգվածների:
- Հայերը ՌԴ Կրասնոդարի երկրամասում արագորեն համարկվեցին երկրի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին, սակայն ՌԴ-ում հայերը չունեն քաղաքական լոբբի, քաղաքական, տնտեսական որոշումների վրա ազդելու ներուժ: ՌԴ-ում ձևավորված կապիտալը Հայաստանում շատ թույլ է արտահայտված. առանձին բացառություններով այն սահմանափակվում է անհատական դրամական փոխանցումներով:
- Տնտեսական մրցակցության և էթնիկ այլ խմբերի հետ հարաբերություններում առաջնային է դարձել հայության ֆիզիկական անվտանգության ապահովումը, ինչը հնարավոր է լուծել բացառապես պետական մակարդակով ու երկկողմանի ջանքերով:
- Ազգային հարցում ՌԴ քաղաքականությունը կրել է փոփոխություն, ըստ որի՝ բոլոր միգրանտները այստեղ դիտարկվում են որպես ժողովրդագրական աշխատանքային ռեսուրս: Ներկայումս ՌԴ-ում բոլոր հնարավոր միջոցներով արդարացվում են ռուսերենի իմացության պահանջը, էթնիկ գոտիների սահմանափակումը և դրանց արագ համարկումը կյանքի բոլոր ոլորտներում:
- Իրատեսական է նաև Ռուսաստանում հայերի ուծացման վտանգը, ուստի մեծանում է Հայաստանի կողմից այդ երկրում հայապահպանության ջանքերի գործադրման, ինչպես նաև հետագայում հնարավոր հայրենադարձության կազմակերպման հանգամանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ազգ», 17.06.2000:
2. **Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ. (2015),** Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտուտ, 441 էջ:
3. **Թաթոյան Ռ. (2007),** Հայրենադարձությունը որպես Հայաստանի պետական քաղաքականության նոր ուղղություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N 20, էջ 127-134:
4. «Լրագիր», 27.07.1995:
5. «Հայ Սփյուռք» հանրագիտարան (2003), Երևան, Հայկական հանրագիտարան, 732 էջ:
6. «Հայաստան», 16.05.2000:
7. ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 217, թ. 3:
8. «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան (1995), Երևան, «Հայագիտակ», 134 էջ:
9. **Մինասյան Է., Մայիլյան Բ., Մխոյան Հ. (2018),** Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմություն և մարտահրավերներ, Երևան, ԵՊՀ հրատ., 152 էջ:
10. **Вартумян А. (2012),** Армяне Краснодарского Края: утраченная идентичность или приобретенное гражданство?, Отв. ред. акад. Г. Г. Матишов, Армяне Юга РОССИИ: История, культура, общее будущее, Материалы Всероссийской научной конференции, Ростов-на-Дону, Изд-во ЮНЦ РАН, с. 146-151.
11. **Гомцян А. (2012),** Армяно-российские отношения на современном этапе развития, Отв. ред. акад. Г.Г. Матишов, Армяне Юга РОССИИ: История, культура, общее будущее, Материалы Всероссийской научной конференции, Ростов-на-Дону, Изд-во ЮНЦ РАН, с. 8-11.
12. **Корякин К. (2007),** Социальные и культурные аспекты адаптации мигрантов армян в Краснодарском крае /1988-2008/, М., Институт социологии РАН, 72 с.
13. **Ктиторов С. (2019),** У истоков истории Армавира, Гл.ред. А.Р. Галустов; науч. ред. С. Н. Ктиторова, Армавир в трех столетиях истории России: XIX-XX-XXI вв. (к 180-летнему юбилею города): Материалы Всероссийской научно-практической конференции с международным участием, Армавир, Изд. ИП Ершова О.А., с. 14-34.
14. **Симонян М. (2011),** История армянской диаспоры Кубани, Армяне Краснодарского края. Краснодар, с. 22-34.

REFERENCES

1. «Azg», 17.06.2000:
2. **Barkhudaryan V., Aljekʻsanyan H. (2015),** Rusastani hay gaghtʻōjakhnjeri patmutʻyun (Hyusisayin Kovkas, Nor Nakhijewan, Astrakhan, Sankt Pjetjerburg, Moskva), JErewan, HH GAA patm. institut, 441 ēj:
3. **Tʻatʻoyan R. (2007),** Hayrjenadardzutʻyunĕ orpjes Hayastani pjetakan kʻaghakʻakanutʻyan nor ughghutʻyun, «Noravankʻ» gitakrtʻakan himnadrami tjeghjekagir, N 20, ēj 127-134:
4. «Lragir», 27.07.1995:
5. «Hay Spʻyurkʻ» hanragitaran (2003), JErewan, Haykakan hanragitaran, 732 ēj:
6. «Hayastan», 16.05.2000:
7. HAA, f. 875, tsʻ. 16, g. 217, tʻ. 3:
8. «Hayjern ashkharhum» hanragitakan hamarot bararan (1995), JErewan, «Hayagitak», 134 ēj:
9. **Minasyan JE., Mayilyan B., Mkhoyan H. (2018),** Hyusisayin Kovkasi haykakan hamaynkʻnjerĕ 20-rd darum. patmutʻyun ew martahravjernjer, JErewan, JEPH hrat., 152 ēj:
10. **Vaptumjan A. (2012),** Apmjanje Kpacnodapckogo Kpaja: utpachjennaja idjentichnoct' ili ppiobpjetjennoje gpazhdanctvo?, Otv. pjed. akad. G. G. Matishov, Apmjanje JUga POCCII: Ictopija, kul'tupa, obsh'jeje budush'jeje, Matjepialy Vcjepoccийской nauchnoй konfjepjencii, Poctov-na-Donu, Izd-vo JUNC PAN, c. 146-151.
11. **Gomcjan A. (2012),** Apmjano-poccийckije otnoshjenija na covpjemjennom etapje pazvitija, Otv. pjed. akad. G.G. Matishov, Apmjanje JUga POCCII: Ictopija, kul'tupa, obsh'jeje budush'jeje, Matjepialy Vcjepoccийской nauchnoй konfjepjencii, Poctov-na-Donu, Izd-vo JUNC PAN, c. 8-11.
12. **Kopjakin K. (2007),** Cocial'nyje i kul'tupnyje acpjekty adaptacii migpantov apmjan v Kpacnodapckom kpaje /1988-2008/, M., Inctitut cociologii PAN, 72 c.
13. **Ktitopov C. (2019),** U ictokov ictopii Apmavipa, Gl.pjed. A.P. Galuctov; nauch. pjed. C. N. Ktitopova, Apmavip v tpjex ctoljetijax ictopii Poccii: XIX-XX-XXI vv. (k 180-ljetnjemu jubiljeju gopoda): Matjepialy Vcjepoccийской nauchno-ppaktichjeckoй konfjepjencii c mjezhdunapodnym uchactijem, Apmavip, Izd. IP JEpshova O.A., c. 14-34.
14. **Cimonjan M. (2011),** Ictopija apmjanckoй diacpopy Kubani, Apmjanje Kpacnodapckogo kpaja. Kpacnodap, c. 22-34.

Ներկայացվել է՝ 07.07.2022 Received 07.07.2022 Получено: 07.07.2022
Գրախոսվել է՝ 12.08.2022 Reviewed 12.08.2022 Рассмотрено: 12.08.2022
Ընդունվել է՝ 25.08.2022 Accepted 25.08.2022 Принято: 25.08.2022

E-mail: eduardzohrabyan@ysu.am
chmelkonyan@ysu.am